ԿԱՆՈՆ
ԿԵՆԴԱՆԱՐԱՐ ՍՈՒՐԲ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Տանեն զնորածին երեխայն ի դուռն Եկէղեցւոյն, եւ ասեն.

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:
Հա՛յր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո...

Օրհնեալ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ:

Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ, Քո մեծ ողորմությամբ եւ Քո գթառատությամբ քավի՛ր իմ անօրենությունները:

Առավել լվա՛ ինձ իմ անօրենությունից և իմ մեղքերից մաքրի՛ր ինձ:

Իմ անօրենությունները ես ինքս գիտեմ, և իմ մեղքերը միշտ առջևս են:

...Անօրենությամբ հղիացավ և մեղքերի մեջ ծնեց ինձ մայրն իմ:

Դու, Տե՛ր, ճշմարտությունը սիրեցիր և Քո իմաստության անհայտն ու ծածուկն ինձ հայտնեցիր:

Ցողի՛ր ինձ սպունգով, և ես կմաքրվեմ, լվա՛, ու ձյունից ճերմակ կլինեմ:

Ինձ ցնծություն և ուրախություն լսել տո՛ւր, և թող տառապյալ ոսկորներս ցնծան:

Երեսդ շո՛ւռ տուր իմ մեղքերից և իմ բոլոր հանցանքները ջնջի՛ր ինձնից:

Իմ մեջ մաքուր սիրտ հաստատի՛ր, Աստվա՛ծ, և արդար հոգի նորոգի՛ր իմ որովայնում:

Քո երեսը մի՛ դարձրու ինձանից, Տե՛ր, և Սուրբ Հոգիդ մի՛ հանիր ինձնից:

Ինձ փրկության ցնծությո՛ւն տուր, և Քո տիրական Հոգով հաստատի՛ր ինձ:

...Փրկի՛ր ինձ արյունից, Աստվա՛ծ, իմ փրկությա՛ն Աստված. լեզուս թող ցնծա Քո արդարությամբ:

Տե՛ր, եթե շրթներս բացես, բերանն իմ կերգի օրհնությունը Քո:

Եթե կամենայիր, պատարագ կմատուցեինք, բայց Դու ողջակեզներ չես սիրում:

Խոնարհ հոգին է պատարագն Աստծո, մաքուր սիրտն ու խոնարհ հոգին Աստված չի արհամարհում:

Քո բարեհաճությամբ բարի՛ք գործիր Սիոնին, Տե՛ր, և Երուսաղեմի պարիսպները թող կառուցվեն:

Այնժամ Դու կհավանես արդար ընծաները, և, իբրև ուխտի զոհեր, Քո սեղանին հորթեր կմատուցեն:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Յասել շարականին՝ ոլորէ զնարօտն կարմիր եւ սպիտակ թելիւ,
որիշ՝ որիշ եւ ապա միաւորեալ ի մի՝ ի խորհուրդ
կենարար արեան եւ ջրոյն, որ ել ի տիգախոց կողէն
Քրիստոսի:

ԲԿ. Երրորդութիւն անբաժանելի եւ զօրութիւն երկնային. լոյս ծագեալ յաշխարհ. նըմա հանցուք զօրհնութիւնս երգով:

Որ էջըն յերկնից այսօր եւ հանգեաւ յառաքեալսն ճըշմարիտ Սուրբ Հոգին. նըմա հանցուք զօրհնութիւնս երգով:

Որ ի խորհուրդըս փըրկականս. այսօր ընդ իջանել յառաքեալսըն ծանուցաւ մարգարէին. նըմա հանցուք զօրհնութիւնս երգով:

Քարոզ

Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո եւ ողորմեա:

Աղօթք

Օրհնեա՛ զնարօտս եւ պահպանեա զմեզ Քրիստոս Աստուած մեր՝ ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչի Քո ի խաղաղութեան. փրկեա՛ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն: Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

φԵφ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա.

Տէ՛ր Աստուած մեր բարերար՝ որ զհեռացեալս ի Քէն զազգս մարդկան, զանկեալս ի դրախտէն փափկութեան՝ ո՛չ անտես արարեր: Այլ գթացեալ խոնարհեցար ի Քումմէ բարձրութենէդ ի մեր նուաստութիւնս, առնելով զբոլոր մեր բնութիւնս բաց ի մեղաց: Չարչարանօք եւ մահու խաչի զփրկութիւն մեր եւ զդարձ գնեալ. վերստին շնորհեցեր մեզ կենդանութիւն: Ընկա՛լ եւ այժմ մարդասէ՛ր Տէր՝ զբարեյօժարութիւն ստեղծուածոյս Քո, որ դիմեաց մերձենալ ի սուրբ եւ ի ճշմարիտ Աստուածութիւնդ Քո՝ քրիստոնեայ անուն յանձին կրելով: Նորոգեա՛ զսա յամենայն նեխութենէ մեղաց. եւ ազատեա՛ ի ծառայութենէ սատանայի: Եւ տո՛ւր սմա զօրութիւն եւ օգնականութիւն արժանաւորիլ եւ հասանիլ ի մաքրութիւն սուրբ

աւազանին, եւ ի ժառանգութիւն Երկնից արքայութեանդ, Տերամբդ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ: Ընդ որում Հօր՝ միանգամայն եւ Հոգւոյդ Սրբոյ՝ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քարոզ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք.

Վասն երեխայիս աղաչեսցուք զմարդասէրն Աստուած, զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան Իւրում. եւ արժանաւորեսցէ զսա լուացման վերստին ծննդեան, եւ զգեստու անապականութեան: Եւ զուգաթուեսցէ զսա՛ ընդ հաւատացեալս անուան Իւրոյ, եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան Իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցուսցէ եւ ողորմեսցի:

Աղօթք

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա.

Ընկա՛լ մարդասէ՛ր Տէր զընծայեալս Քեզ զերեխայս զայս, եւ սրբեա՛ զմիտս եւ զխորհուրդս սորա յամենայն ներգործութեանց հակառակորդին: Եւ արժանի արա զսա ի ձեռն սուրբ աւազանին լուանալ զհնութիւն մեղաց իւրոց, եւ նորոգիլ լուսով շնորհաց Քոց: Զի եւ սա մեօք հանդերձ փառաւորեսցէ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քարոզ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք.

Վասն քաւութեան մեղաց եւ թողութեան յանցանաց, եւ իջանելոյ ողորմութեանն Աստուծոյ ի վերայ երեխայիս զՏէր աղաչեսցուք:

Աղօթք

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա.

Տէ՛ր Աստուած մեծ եւ փառաւորեալ յամենայն արարածոց, ի Քո ահաւոր եւ ամենազօր անունդ ապաւինեալ ծառայս Քո, խոնարհեցոյց զգլուխ իւր անուան Քում սրբոյ. որում կրկնի ամենայն ծունր երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց. եւ ամենայն լեզու խոստովան լինի, եթէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր: Արդ՝ յայդմ ահաւոր եւ յաղթող անուանէդ մասն հաղորդութեան ընկալցի սա. որ հալածեաց զխաբէութիւն սատանայի, եւ զամենայն որոգայթս մոլորութեան նորա խափանեաց: Նայեա՛ Տէր ողորմութեամբ Քով ի սա. մերժեա՛ եւ հեռացո՛ ի սմանէ ամենայաղթ կոչմամբ անուան Քո ի վերայ սորա, զխորհուրդս՝ զբանս եւ զգործս, եւ զամենայն խաբէութիւնս չարին, որով սովոր է խաբել եւ կորուսանել զմարդիկ: Որպէս զի զարհուրեալ ի սուրբ եւ ի յաղթող անուանէդ Քումմէ, տագնապեսցի եւ տանջեսցի աներեւոյթ տանջանօք. եւ երդմամբ հեռացեալ ի սմանէ, այլ մի՛ եւս դարձցի ի սա: Լցո՛ զսա երկնային շնորհօքդ, եւ զուարճացո՝ ամենաբարի կոչմամբ քրիստոնեայ անուանելով. եւ արժանի արա՛ զսա մկրտութեան վերստին ծննդեան սուրբ աւազանին: Եւ ընդունելով զՀոգիդ Քո Սուրբ, մարմին եւ անդամ եղիցի Եկեղեցւոյ Քում Սրբոյ: Եւ անարատ քրիստոնէութեամբ կրօնաւորեալ յայսմ աշխարհիս, հանդերձելոց բարեացդ հասցէ ընդ ամենայն սուրբս Քո: Փառաւորելով զանփոփոխելի Տէրութիւնդ Քո, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա կնքահայրն կամ չափահասն երեք ծունր կրկնէ եւ ասէ երիցս.

Քե՛զ հանձնվեցի ես արգանդից, մորս որովայնից սկսած
Դու ե՛ս Աստվածն իմ:

Ապա առնու կնքահայրն զերեխայն ի գիրկն,
դառնայ յարեւմուտս եւ ասէ ընդ քահանային երիցս.

Հրաժարվում ենք սատանայից եւ նրա բոլոր խաբեություններից, նրա պատրանքներից, նրա խորհուրդներից, նրա ընթացքից, նրա չար կամքից, նրա չար հրեշտակներից, նրա չար պաշտոնյաներից, նրա չար կամակատարներից և նրա ամբողջ չար զորությունից հրաժարվելով հրաժարվում ենք:

Ապա դառնայ յարեւելս՝ եւ ասէ.

Դառնամք ի լոյս աստուածգիտութեան:
Հավատում ենք Ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը և Որդուն եւ Սուրբ Հոգուն, Գաբրիելի ավետմանը, Քրիստոսի ծննդյանը, մկրտությանը, չարչարանքներին, խաչելությանը, աստվածապես համբարձմանը, Հոր Աջ կողմում նստելուն, ահավոր և փառավորյալ մյուսանգամ գալստյանը՝ խոստովանում ենք և հավատում:

Օրթի:
Խաղաղութիւն ամենեցուն:
Եւ ընդ հոգւոյդ քում: Երկիւղածութեամբ լուարուք:
Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի, որ ըստ Մատթէոսի:
Փառք Քեզ Տէր Աստուած մեր:
Պռօսխումէ: Ասէ Աստուած:
Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Իսկ մետասան աշակերտքն գնացին ի Գալիլիա ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս: Իբրեւ տեսին զՆա՝ երկիրպագին նմա. եւ ոմանք յերկուացան: Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա՝ եւ ասէ. տուաւ Ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի. որպէս առաքեաց զԻս Հայր, եւ Ես առաքեմ զձեզ: Գնացէ՛ք այսուհետեւ՝ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս. մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ՝ եւ Հոգւոյն Սրբոյ: Ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ: Եւ ահաւասիկ Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչեւ ի կատարած աշխարհի:

ՓԵՓ

Երթան դէպ յաւազանն ասելով շարական.

ԳՁ. Արեգակն արդարութեան Քրիստոս ծագեալ յաշխարհ հալածեաց ըզխաւարն անգիտութեան. եւ յետ մահու եւ յարութեան համբարձաւ առ Հայր յՈրմէ ծագեաց. որ երկըրպագի յերկնաւորաց եւ յերկրաւորաց ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն. վասն որոյ եւ մեք երկիրպագանեմք Հօր հոգւով եւ ճըշմարտութեամբ:

Եւ հասեալ առ աւազանաւ, ուր կանխաւ պատրաստ լինելոց է սուրբ միւռոնն, զոր առնու քահանայն ի ձեռս իւր, եւ սարկաւագն ասէ.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք.

Վասն իջանելոյ շնորհաց Հոգւոյն Սրբոյ ընդ իւղոյս այսորիկ զՏէր աղաչեսցուք:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա.

Օրհնեա՛լ ես Տէր Աստուած ամենակալ, որ ընտրեցեր Քեզ նոր ժողովուրդ ի քահանայութիւն եւ ի թագաւորութիւն, յազգ սուրբ, ժողովուրդ սեպհական. ըստ որում նմանութեան յառաջագոյն օծեր զքահանայս, զմարգարէս եւ զթագաւորս՝ ամենասուրբ այսպիսի՛ իւղով: Եւ այժմ աղաչեմք զՔե՛զ Տէ՛ր բարերար, առաքեա՛ զշնորհս ամենասուրբ Հոգւոյդ ընդ իւղոյս. զի որ օծցի, եղիցի նմա ի սրբութիւն հոգեւոր իմաստութեան, ի նահատակութիւն եւ ի յաղթութիւն հակառակամարտին. ի զօրութիւն պատուիրանապահութեան առաքինի գործոց, եւ յամենակատար հրահանգս եւ ի կրթութիւնս աստուածպաշտութեան: Որպէս զի լուսաւորեալ մտօք եւ առաքինասէր վարուք կեցցէ յայսմ աշխարհիս ի փըրկութիւն անձին իւրոյ, ի պատիւ եւ ի փառս Ամենասուրբ Երրորդութեանդ: Եւ արժանի լիցի հասանիլ վիճակի ժառանգութեան սրբոցն ի լոյս: Փառաւորելով զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգի այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Արկանէ զջուր ջերմ յաւազանն խաչանման ասելով Սաղմոս.

Ձայն Տեառն ի վերայ ջուրց, եւ Աստուած փառաց որոտաց, եւ Տէր Ինքն ի վերայ ջուրց բազմաց:
Մատուցէ՛ք Տեառն զփառս եւ զպատիւ, մատուցէ՛ք Տեառն զփառս անուան նորա, եւ երկիրպագէ՛ք Տեառն ի սրահ սրբութեան Նորա:
Տէր զօրութիւն ժողովրդեան Իւրոյ տացէ, եւ օրհնեսցէ զժողովուրդ Իւր ի խաղաղութիւն:

Այս ընթերցվածը Եզեկիելի մարգարեությունից է.

«Այսպես է ասում Տերը. «Ձեզ վրա սուրբ ջուր եմ ցանելու, և դուք մաքրվելու եք ձեր բոլոր պղծություններից. ձեր բոլոր կուռքերից մաքրելու եմ ձեզ: Նոր սիրտ եմ տալու ձեզ, և նոր հոգի եմ դնելու ձեր մեջ, և ձեր մարմիններից հանելու եմ քարեղեն սիրտն ու մարմնեղեն սիրտ եմ տալու ձեզ, և Իմ Հոգին եմ տալու ձեզ: Եվ այնպես եմ անելու, որ Իմ արդարության ճանապարհով ընթանաք, օրենքներս պահեք ու կատարեք դրանք, և բնակվեք այն երկրում, որը տվեցի ձեր հայրերին, և Ինձ համար ժողովուրդ լինեք, և Ես Աստված լինեմ ձեզ համար»» (Եզեկ. ԻԶ 25-28):

Այս ընթերցվածը Պողոս առաքյալի՝
Գաղատացիներին ուղղված նամակից է.

«Այսպես, Օրենքը մեր խնամակալ դաստիարակը եղավ՝ մեզ առաջնորդելով դեպի Քրիստոս Հիսուս, որպեսզի հավատով արդարանանք: Իսկ երբ հավատքը եկավ, այլևս դաստիարակի ձեռքի տակ չենք, քանզի բոլորդ էլ Աստծո որդիներ եք հավատքով ի Հիսուս Քրիստոս: Դուք բոլորդ, որ միանգամ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք. ուրեմն

խտրություն չկա ո՛չ հրեայի և ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի և ո՛չ ազատի, ո՛չ արուի և ո՛չ էգի միջև, քանի որ դուք ամենքդ մեկ եք ի Քրիստոս Հիսուս: Իսկ եթե դուք Քրիստոսինն եք, ուրեմն Աբրահամի սերունդ եք, ժառանգներ՝ ըստ խոստման» (Գաղ. Գ 24-29):

Ալելուիա, ալելուիա.

«Տերն ինձ կհովվի, և ես ոչ մի բանի կարիք չեմ ունենա» (Սաղմ. ԻԲ 2):

Օրթի:

Խաղաղութիւն ամենեցուն:

Եւ ընդ հոգւոյդ քում: Երկիւղածութեամբ լուարուք:

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի, որ ըստ Յովհաննու:

Փառք Քեզ Տէր Աստուած մեր:

Պռօսխումէ: Ասէ Աստուած:

«Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Եվ փարիսեցիների մեջ Նիկոդեմոս անունով մի մարդ կար, որ հրեաների իշխանավոր էր: Սա գիշերով եկավ Նրա մոտ և Նրան ասաց. «Ռաբբի՛, գիտենք, որ Աստծուց ես եկել որպես վարդապետ, որովհետև ոչ ոք չի կարող կատարել այն նշանները, որ Դու ես անում, եթե Աստված նրա հետ չլինի»: Հիսուս պատասխանեց և ասաց նրան. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստծո արքայությունը մտնել»: Նիկոդեմոսը Նրան ասաց. «Ինչպե՞ս կարող է ծնվել մի մարդ, որ ծեր է. միթե կարո՞ղ է իր մոր որովայնը կրկին մտնել ու ծնվել»: Հիսուս պատասխան տվեց և ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, չի կարող Աստծո արքայությունը մտնել, որովհետև մարմնից ծնվածը մարմին է, իսկ Հոգուց

ծնվածը՝ հոգի: Դու մի՛ զարմացիր, որ քեզ ասացի՝ պետք է ձեզ վերստին ծնվել, որովհետև քամին ուր ուզում է՝ փչում է, և նրա ձայնը լսում ես, բայց չգիտես ո՛րտեղից է գալիս կամ ո՛ւր է գնում. այսպես է և ամեն ոք, որ Հոգուց է ծնված»:

Քարոզ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Վասն ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան անձանց մերոց զՏէր աղաչեսցուք: (Լուր Տէր եւ ողորմեա՛):

Վասն սրբելոյ զջուրս զայս ներգործութեամբ Հոգւոյն Սրբոյ, զՏէր աղաչեսցուք:

Վասն որդիս լուսոյ առնելոյ զոր ի սմա մկրտին. զՏէր աղաչեսցուք:

Վասն աստուածային զօրութիւն զգեցուցանելոյ սորա՝ ընդդէմ հակառակամարտին օծմամբ իւղոյս այսմիկ, զՏէր աղաչեսցուք:

Վասն անօթ սրբութեան լինելոյ սորա առ ընդունելութիւն աստուածատուր խորհրդոցն, զՏէր աղաչեսցուք:

Վասն ամուր եւ հաստատուն շնորհելոյ սորա զգիտութիւն առաքելական հաւատոյ. զՏէր աղաչեսցուք:

Վասն փրկելոյ զսա եւ զմեզ յամենայն նեղութենէ, ի բարկութենէ, ի վշտաց եւ ի վտանգից. զՏէր աղաչեսցուք:

Յիշելով զամենասրբուհի Աստուածածինն, եւ զՄկրտիչն Յոհաննէս, եւ զամենայն սուրբս, եւ նոքօք զՏէր աղաչեսցուք:

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան Քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Աղօթք

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա.

Դո՛ւ Տէր՝ զօրութեամբ Քով մեծաւ արարեր զծով եւ զցամաք, եւ զամենայն՝ որ ի նոսա արարածք իցեն. որոշեցեր եւ կացուցեր զջուրն ի վերոյ քան զերկինս՝ ի բնակութիւն երկնաւոր զուարթնոցն, որ կան յանդադար

փառաբանութեան Քում: Առաքեցեր եւ զսուրբ զառաքեալսն Քո, տալով նոցա հրաման քարոզել եւ մկրտել զամենայն հեթանոսս յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Այլեւ սահմանացեր անսուտ բանիւ Քով՝ ոչ ծնելոցն ի ջրոյ եւ ի հոգւոյն՝ ո՛չ մտանել յարքայութիւնն Աստուծոյ: Յորմէ բանէ զարհուրեալ ծառայս Քո, եւ փափագելով մշտնջենաւոր կենացդ, եկն կամաւ ի մկրտութիւն հոգեւոր ջրոյս այսորիկ: Արդ աղաչեմք զՔեզ Տէ՛ր, առաքեա՛ զՀոգիդ Քո Սուրբ ի ջուրս յայս, եւ սրբեա՛ զսա, որպէս սրբեցեր զՅորդանան իջանելով Քո ի նմա՝ ամենասուրբդ ի մեղաց՝ Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս, յօրինակ այսմ աւազանի մկրտութեան՝ վերստին ծննդեան ամենայն մարդկան: Եւ շնորհեա՛ սմա զջուրս զայս՝ յորում մկրտի այժմ, ի թողութիւն մեղաց՝ եւ յընդունելութիւն Հոգւոյդ Սրբոյ. յորդեգրութիւն Հօրդ երկնաւորի՝ եւ ի ժառանգութիւն արքայութեանդ երկնից: Որպէս զի սրբեալ ի մեղաց, ի հաճոյս կամաց Քոց կեցցէ յայսմ աշխարհիս. եւ ի հանդերձելումն զանսպառ բարիսն ընկալցի ընդ ամենայն սուրբս Քո. եւ ուրախութեամբ գոհասցի եւ միշտ փառաւորեսցէ զՔեզ ընդ Հօր եւ Սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ապա մերկացուցանէ մանկաբարձն զերեխայն, եւ բերէ կնքահայրն առ ընթեր քահանային. եւ առեալ քահանայն զսուրբ միւռոնն ի ձեռն, խաչակնքէ ի վերայ ջրոյն ասելով.

Ամէն ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Օրհնեսցի եւ սրբեսցի ջուրս այս նշանաւ սուրբ Խաչիւս, եւ սուրբ Աւետարանաւս, եւ սրբալոյս միւռոնաւս, եւ աւուրս շնորհիւ.

յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Երիցս կրկնէ եւ ապա ասէ.

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.ամէն:

Ապա հեղու զսրբալոյս միւռոնն յաւազանն խաչանման ասելով շարական.

ԴՁ. Առաքելոյ աղաւնոյ՝ իջանելով մեծաձայն հընչմամբ ի բարձանց ի նմանութիւն լուսոյ փայլման հրազինեաց անկիզելի զաշակերտսն. մինչդեռ նըստէին ի սուրբ վերնատանն:

Աննիւթական աղաւնի. անքընննելի որ քննէ ըզխորս Աստուծոյ. զոր առեալ ի Հօրէ՝ պատմէ զահաւոր եւ ըզմիւսանգամ գալուստն. զոր քարոզեցին համագոյական:

Օրհնութիւն ի բարձունս՝ ելողին ի Հօրէ Հոգւոյն Սրբոյ. որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն. եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:

Եւ կնքահայրն կանգնի մերձ յաւազանն. եւ քահանայն ասէ զաղօթս.

Որ կոչեցեր զծառայս Քո, Տէ՛ր, ի սրբութիւն եւ ի լուսաւորութիւն մկրտութեան, աղաչեմք զՔեզ, Տէ՛ր, արա՛ զսա արժանի մեծի շնորհաց Քոց: Մերկեա՛ ի սմանէ զհնութիւն մեղաց, եւ նորոգեա՛ ի կեանս նորս, եւ լցո՛ զօրութեամբ Հոգւոյդ Սրբոյ ի նորոգութիւն փառաց Քրիստոսի Քոյ: Եւ Քեզ հզօրիդ՝ եւ Միածնի Որդւոյ Քո եւ ազատիչ Սուրբ Հոգւոյդ վայելէ փառք՝ իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հարցանէ քահանայն երիցս:

Այս երախան ի՞նչ է խնդրում:

Կնքահայրն կամ չափահաս մկրտեալն պատասխանէ.

Հավատք, հույս, սեր և մկրտություն: Մկրտվել և արդարանալ. սրբվել մեղքերից, ազատվել դևերից, և ծառայել Աստծուն:

Եւ ասէ քահանայն.

Ըստ քո հավատքի թող լինի քեզ:
Ապա իջուցանէ զերեխայն յաւազանն՝ ձախ ձեռամբ կալեալ զպարանոցն, եւ աջովն՝ զոտսն, գլուխն յարեւմուտս կոյս բարձր (երեսն ի վեր) եւ ոտքն յարեւելս ի խոնարհ, եւ դնէ զանունն ասելով.

(Այս անուն) ծառայս Աստուծոյ, եկեալ յերեխայութենէ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Գնեալ արեամբն Քրիստոսի ի ծառայութենէ մեղաց, ընդունի զորդեգրութիւն Հօրն երկնաւորի, լինել ժառանգակից Քրիստոսի, եւ տաճար Հոգւոյն Սրբոյ:

Զայս միանգամ ասելով՝ երիցս թաղէ զերեխայն ի ջուրն (յօրինակ երեքօրեայ թաղմանն Քրիստոսի): Իսկ արդ՝ յասելն, Յանուն Հօր, ընկղմէ միանգամ, յասելն, եւ Որդւոյ, ընկղմէ միանգամ եւս, եւ յասելն, եւ Հոգւոյն Սրբոյ, ընկղմէ դարձեալ: Եւ այսպէս կոչումն անուան Ամենասուրբ Երրորդութեան լինի միանգամ, եւ ընկղմումն երեք անգամ: Եւ հանեալ ի ջրոյն տայ ցկնքահայրն եւ ասէ.

Որք ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցեա՛լ էք, ալէլուիա: Որ ի Հայր լուսաւորեցայք, Սուրբ Հոգին բերկրեսցի ի ձեզ, ալէլուիա:

ՇԱՐԱԿԱՆ. ԳՁ. Որ համագոյդ ես Հօր եւ Որդւոյ. անճառաբար բըղխումն ի միշտ էէն. այսօր. բըղխեցեր ջուր կենդանի յԵրուսաղէմ. Հոգի Աստուծոյ ողորմեա:
Որ արարչակից ես Հօր եւ Որդւոյ. որով կենդանածնեալք ի ջուրս արարածք. այսօր որդիս Աստուծոյ ծնանիս ի ջուրց. Հոգի Աստուծոյ ողորմեա:

Այս ընթերցվածը Պողոս առաքյալի՝ Հռոմեացիներին ուղղված նամակից է.

«Չգիտե՞ք, որ մենք բոլորս, որ մկրտվեցինք ի Քրիստոս Հիսուս, Նրա մահո՛վ է, որ մկրտվեցինք: Մկրտությամբ թաղվեցինք Նրա հետ մահվան մեջ, որպեսզի, ինչպես որ Քրիստոս մեռելներից հարություն առավ Հոր փառքով, նույնպես և մենք քայլենք նոր կյանքով, որովհետև եթե Նրա մահվան նմանությամբ տնկակից եղանք նրան, պիտի լինենք նաև Նրա հարության նմանությամբ: Այս իմացեք, որ մեր միջի հին մարդը խաչվեց Նրա հետ, որպեսզի քայքայվի մեղքի մարմինը, և այլևս մենք չծառայենք մեղքին, քանի որ ով մեռնում է, արդարացված է մեղքից: Եվ եթե Քրիստոսի հետ մեռանք, հավատում ենք, որ Նրա հետ էլ կապրենք: Իմանալով, որ Քրիստոս մեռելներից հարություն առած լինելով՝ այսուհետև չի մեռնի, և մահը Նրան այլևս չի տիրի, որովհետև Նա, որ մեռավ, մեղքի համար մեռավ մեկընդմիշտ, և Նա, որ կենդանի է, կենդանի է Աստծո համար: Նույնպես և դուք ձեզ մեռած համարեցե՛ք մեղքի համար, բայց կենդանի՝ Աստծո համար, մեր Տեր Քրիստոս Հիսուսով» (Հռոմ. Զ 3-11):

Ալէլուիա օրթի:
Խաղաղութիւն ամենեցուն:
Եւ ընդ հոգւոյդ քում: Երկիւղածութեամբ լուարուք:
Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի, որ ըստ Մատթէոսի:
Փառք Քեզ Տէր Աստուած մեր:
Պռօսխումէ: Ասէ Աստուած:
«Մեր Տեր Հիսուս Քրիստոսի մկրտության մասին.

Այն ժամանակ Հիսուս Գալիլիայից Հորդանան եկավ Հովհաննեսի մոտ՝ նրանից մկրտվելու: Իսկ Հովհաննեսն ընդդիմացավ նրան ու ասաց. «Ի՛նձ պետք է, որ Քեզնից մկրտվեմ, և Դու ի՞նձ մոտ ես գալիս»: Հիսուս պատասխանեց և ասաց նրան. «Թո՛ւյլ տուր հիմա, որովհետև այսպես վայել է, որ մենք կատարենք Աստծո ամեն արդարություն»: Եվ ապա Նրան թույլ տվեց: Եվ երբ Հիսուս մկրտվեց, իսկույն ջրից դուրս ելավ, և ահա երկինքը բացվեց Նրան, և տեսավ Աստծո Հոգին, Ով իջնում էր ինչպես աղավնի և գալիս էր Նրա վրա: Եվ ահա՝ մի ձայն երկնքից, որ ասում էր. «Դա՛ է Իմ սիրելի Որդին, որն ունի Իմ ամբողջ բարեհաճությունը» (Մատթ. Գ 13-17):

φ ≅ φ

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:
Հա՛յր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո...

Ապա ասի շարական:

ԴԿ. Աղբիւր կենաց բաշխող շնորհաց Հոգիդ իջեալ ի բարձանց. զանապական պարգեւըս Քո բաժանեցեր յառաքեալսն:

Որ ի վերայ ջուրցըն գոլով ստեղծանէիր զարարածս. իջեալ ի ջուրս աւազանին, ծնանիս որդիս Աստուծոյ:

Աղօթք

Որ լուսաւորեցեր զարարածս Քո Քրիստոս Աստուած, ծագելով զլոյս աստուածգիտութեան յանձինս մեր. եւ այժմ

ազատեցեր զծառայս Քո զայս, սրբեցեր եւ արդարացուցեր, եւ ետուր սմա զորդեգրութեան պատիւն: Շնորհեա՛ սմա Տէ՛ր՝ եւ զկենացն հաւասարութիւն, եւ պարգեւեա՛ զհանապազորդն անապականութիւն, խառնելով զսա ընդ արդարս Քո՝ եւ ի թիւս սրբոց Քոց. եւ ընդ նոսին փառաւորել զՔեզ ընդ Հօր՝ եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Աստուա՛ծ որ մեծդ ես եւ մշտնջենաւոր՝ եւ ամենայն գաղտնեաց գիտակ. որ սուրբ ես եւ ի սուրբս հանգուցեալ, փրկիչ ամենայն մարդկան: Որ շնորհեցեր զգիտութիւն ճշմարտութեան Քո՝ ամենայն հաւատացելոց. եւ ետուր իշխանութիւն լինիլ որդիս Աստուծոյ ի ծեռն վերստին ծննդեան ջրոյ եւ Հոգւոյ: Որ եւ զծառայս Քո (զայս անուն) նորոգեցեր քաւութեամբ սուրբ աւազանի Քո: Սուրբ արա՛ զսա՛ Տէր՝ ճշմարտութեամբ Քով, եւ լուսով շնորհաց Սուրբ Հոգւոյդ. զի եղիցի տաճար եւ բնակարան Աստուածութեանդ Քո. եւ կարասցէ գնալ յամենայն ճանապարհս արդարութեան. եւ կալ համարձակութեամբ առաջի ահաւոր բեմի Միածնի Քո՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ընդ որում Քեզ Հօր ամենակալի, եւ կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգւոյդ՝ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա լնու քահանայն զսուրբ իւղն ի միւռոնատուփն, եւ ասէ շարական.

ՂՁ. Որ յառաջագոյն յօրէնս. յօրինակ Միածնի Քո Հայր երկնաւոր. ետուր զօրութիւն ի յիւղ սրբութեան յօծումն օծելոց. հեղ ընդ այս իւղոյս զերկնային Քո զշնորհս:

Կնքէ սուրբ իւղովն զճակատն, ասելով.

Ե Միւռոն անոյշ յանուն Յիսուսի Քրիստոսի, հեղեալ ի վերայ քո՝ կնիք երկնաւոր պարգեւացն անապականութեան:

զԱչսն Ե Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի, լուսաւորեսցէ՛ զաչս քո. զի մի՛ երբէք ննջեսցես ի մահ:

զԱկանջսն Ե Օծումն սրբութեան եղիցի քեզ ի լսելութիւն աստուածային պատուիրանացն:
զՀոտոտելիսն Ե Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի, եղիցի քեզ հոտ անուշութեան կենաց ի կեանս:

զԲերանն Ե Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի, եղիցի քեզ պահպանութիւն բերանոյ եւ դուռն ամուր շրթանց քոց:

զՁեռսն (ափ ի կից ունելով) Ե Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի, եղիցի քեզ պատճառ բարեգործութեան ամենայն առաքինի գործոց եւ վարուց:

զՍիրտն Ե Կնիքս աստուածային՝ սիրտ սուրբ հաստատեսցէ ի քեզ, եւ հոգի ուղիղ նորոգեսցէ ի փորի քում:

զՔամակն Ե Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի, եղիցի քեզ վահան ամրութեան. որով կարասցես զամենայն նետս մուխս չարին շիջուցանել:

զՈտսն Ե Կնիքս աստուածային ուղղեսցէ՛ զգնացս քո ի կեանսն յաւիտենից. զի մի՛ սասանեսցիս:

Ապա տեառնագրէ խաչիւ ի վերայ մկրտելոյն ասելով՝

Խաղաղութիւն ընդ քեզ փրկեա՛լդ Աստուծոյ: Խաղաղութիւն ընդ քեզ՝ օծեալդ Աստուծոյ:

Կնքահայրն ասէ.

Եւ ընդ հոգւոյդ քում:

φEφ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԽԱՉԻ

Եւ զնշանս զտէրունիս դնէ ի վերայ աւազանին, եւ ասեն.

Ալէլուիա, ալէլուիա.
Ետուր երկիւղածաց Քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան:
Որպէս փրկեցան սիրելիք Քո. կեցո աջով Քով եւ լուր մեզ:
Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ,
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա սարկաւագն քարոզէ.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Վասն բարերարելոյ Տեառն Աստուծոյ ի վերայ մեր եւ լսելոյ ձայնի աղաչանաց մերոց. զՏէր աղաչեսցուք:

Վասն պահելոյ զմեզ ընդ սորին յաղթօղ զօրութեամբն. զՏէր աղաչեսցուք:

Վասն օրհնութեամբս՝ ամենայաղթ լինելոյ Սրբոյ Խաչիս. զՏէր աղաչեսցուք:

Ողորմեաց զմեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան Քում, ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

ԱՂՕԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա.

Տէր Աստուած զօրութեանց, Քրիստոս Փրկիչ մեր՝ դի՛ր զարարչական ձեռն Քո՝ զոր տարածեցեր ի վերայ սորին

նշանիս, եւ օրհնեա՛ Ե զխաչս զայս ի պահպանութիւն (այս անուն) ծառայիս Քո:

Եւ եդեալ զաջն ի վերայ խաչին, ասէ.

Դի՛ր Տէր զամենասուրբ ձեռն Քո ի վերայ նշանի խաչիս. օրհնեա՛ եւ տո՛ւր յաղթանակ նորոգ մկրտեալ եւ փրկեալ ծառայիդ Քում, պարծելոյն ի կենսաբեր անուն Քո:

Ձգեա՛ Տէր զկենսագործող եւ զբարձրացեալ աջ Քո՝ զոր սփռեցեր ի վերայ սորին զօրացեալ նշանիս եւ արարեր զանքննին մեծութիւնս: Օրհնեա՛ Ե զխաչս զայս եւ տո՛ւր պահապան այսմ խոստովանողի Ամենասուրբ Երրորդութեանդ, եւ վահան ամրութեան՝ շիջուցանել զամենայն նետս մուխս չարին, եւ ընդդիմամարտ թշնամւոյն, զի Քո է զօրութիւն, տէրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Եւ ապա տեառնագրէ ի վերայ խաչին ասելով.

Ամէն ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Օրհնեսցի եւ սրբեսցի զնշանս զտէրունիս այս նշանաւ Սուրբ Խաչիւս, եւ Սուրբ Աւետարանաւս եւ աւուրս շնորհիւ. յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Երիցս կրկնէ եւ ապա ասէ.

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ապա սարկաւագն քարոզէ.

Սուրբ Խաչիւս աղաչեսցո՛ւք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ
ի մեղաց եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ.
Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո՛ եւ ողորմեա՛:

ԱՂՕԹՔ

Կեցո Տէր եւ ողորմեա,
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա.

Օրհնեա՛ զնշանս զտէրունիս եւ պահեա՛, պահպանեա՛ զծառայս Քո, Քրիստոս Աստուած մեր, ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչի Քո ի խաղաղութեան, փրկեա՛ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն: Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ապա զգեցուցանէ հանդերձ սպիտակ եւ նոր, կապէ զնարօտն, եւ տայ զերկուս վառեալ մոմեղէնս ի ձեռն կնքահօրն կամ չափահասին, եւ ասէ շարական.

ԲՁ. Աստուած խօսեցաւ ի բարձանց. լըւարուք բընակիչք երկրի. որ եկն եւ փըրկեաց զամենայն արարածս. զի զանուն Տեառն կարդասցուք. եւ տուք օրհնութիւն ի բարձունս:

Աղօթք

Օրհնեալ ես բարեխնամող Աստուած, որ զգեցուցեր ծառայի Քում հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան. եւ եդեր սաղաւարտ փրկութեան եւ պսակ շնորհաց ի գլուխ սորա, եւ զէն անվթար ընդդէմ հակառակամարտին: Վասն որոյ եւ մեք գոհութեամբ փառաւորեսցուք զՔեզ ընդ Որդւոյ եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հանէ ի բեմն զնորընծայն՝ եւ ասէ.

Ես կմոտենամ Աստծո սեղանին, Աստծուն, որ ուրախ է դարձնում իմ մանկությունը:
Դատի՛ր ինձ, Աստվա՛ծ, և դատաստանիս ժամին արդարացրո՛ւ ինձ:
Անսուրբ ազգից, մեղսագործ ու նենգ մարդուց փրկի՛ր ինձ:
Առաքի՛ր, Տե՛ր, Քո լույսն ու ճշմարտությունը, որ ինձ առաջնորդեն և հանեն Քո սուրբ լեռն ու Քո օթևանները:
Արդ, ինչո՞ւ ես տրտմում, հոգի՛ իմ, կամ ինչո՞ւ ես ինձ խռովեցնում, հույսդ դի՛ր Աստծո վրա, խոստովան եղիր Նրան, Նա իմ փրկիչ Աստվածն է:
Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Եւ զկնի խոնարհեալ՝ ասէ երիցս.

(Այս անուն) ծառայս Քրիստոսի՝ եկեալ յերեխայութենէ ի մկրտութիւն, ի մկրտութենէ յերկրպագութիւն, երկրպագէ սուրբ Սեղանոյս, երկրպագէ սուրբ Խորանիս, երկրպագէ սուրբ Աւազանիս, որ մերկացաւ զանօրէնութիւն, եւ զգեցաւ զլոյս աստուածգիտութեան:

Եւ ապա սարկաւագն քարոզէ.

Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարուք:

Հաղորդէ զնորընծայն ի սուրբ Մարմնոյ եւ յԱրենէ Տեառն՝ ասելով.

Մարմին եւ արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցի քեզ փրկութիւն եւ առաջնորդ յանվախճան կեանսն. ամէն:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա.

Փառք Քեզ թագաւոր յաւիտենական, որ աճեցուցանես եւ լցուցանես զԵկեղեցի Քո՝ լուսով հաւատոյ անհամար փրկելոցս, ի ձեռն ճշմարիտ աստուածածանօթութեան Քրիստոսի Քո: Զորս վերստին ծննդեամբ արժանի արարեր որդեգրութեան Հօրդ երկնաւորի, հաղորդելով Մարմնոյ եւ Արեան Միածնի Քո: Եւ արդ Տէր՝ պահեա՛ զսա սրբութեամբ Հոգւոյդ Սրբոյ, առնել անարատութեամբ զկամս Քո, եւ անմեղութեամբ ժամանել ի կեանսդ յաւիտենից: Եւ զմեզ զամենեսեան զմերձաւորս սորա, օրհնեա՛ շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ընդ Որում Քեզ Հօր եւ Հոգւոյդ Սրբոյ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Խաղաղութիւն եւ հաստիչ խաղաղութեան, Յիսուս Քրիստոս, օծեալ եւ երկրպագելի եւ քահանայապետ յաւիտենից: Ահա ընկալաւ (այս անուն) ծառայս Քո զօծումն սրբութեան Քո, վասն որոյ աղաչեմք զՔեզ, Տէր, մի՛ ջնջեսցի սա ի դպրութենէ Քումէ կենաց: Եւ մեք արժանի լիցուք երկնային փառաց Քոց, յորժամ պսակես զսուրբս Քո եւ զսիրելիս անուան Քում սրբոյ, եւ անդադար փառաւորեսցուք զՔեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քարոզ

Սուրբ Խաչիւս աղաչեսցո՛ւք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո՛ եւ ողորմեա՛:

Տայ զնորընծայն ի գիրկս կնքահօրն եւ քահանայն խաչ ի ձեռս կալով, ասէ զաղօթս.

Որք մկրտեցան եւ լուսաւորեցան, եւ ետուր նոցա զզօրութիւն Քո՝ Տէր. տո՛ւր եւ հաստատութիւն, կալ միշտ ի սրբութեան Քում, եւ պայծառանալ ի լոյս աստուածգիտութեան Քո: Պահեա՛ զսա հաստատուն ի շնորհս Քո զոր ետուր. հեռացո՛ զսա ի մոլորութենէ թշնամւոյն, եւ ի պատրանաց նորա, եւ ի գործոց անօրէնութեան, զի լուսով գիտութեան Քո՝ գնասցէ ի պատուիրանս Քո, եւ ուղիղ վարուք հասցէ ի խոստացեալ հանգիստն Քո յաւիտենից: Զհրեշտակ խաղաղութեան Քո առաքեա՛ Տէր, որ եկեալ պահեսցէ զսա: Եւ մեք ամենեքեան արժանի լիցուք սպասել յուսով՝ յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ընդ Որում Քեզ Հօր եւ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտենաս յաւիտենից. ամէն:

Համբուրեն զնոր մկրտեալն եւ ասեն շարական.

ԴԿ. Որ անտես եւ անքննին քառակերպիցըն վեհագոյն. ի փըրկել ըզմեզ եկեալ անմահից թագաւորն օրհնութիւն առաքողին:

Եւ յելանել Նորա ի ջրոյն, ահա բացան նըմա երկինք. Սուրբ Հոգին աղաւնակերպ գայր ի վերայ կենարարին. օրհնութիւն առաքողին:

Քարոզ

Սուրբ Խաչիւս աղաչեսցո՛ւք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո՛ եւ ողորմեա՛:

Եւ ասէ քահանայն.

Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած մեր, պահեա՛ եւ պահպանեա՛ զնորոգ մկրտեալ զծառայս Քո ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական Խաչի Քո ի խաղաղութեան. փրկեա՛ եւ ազատեա՛ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն եւ յամենայն փորձութենէ: Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հա՛յր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո: Եկեսցէ արքայութիւն Քո. եղիցին կամք Քո որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ ի չարէն: Զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն: